

քաղաքի և զվերանորոգութիւն յիշեալ տան, զոր հարկաւոր ծանիցէ ուսումնական վարչութիւն ևս և զկարեւոր յաւելուածս ի նմին տան՝ առ ի յարմարեցուցանել զայն ըստ նշանակութեան առնել ի քաղաքական գումարաց. նաև ի դէպս պակասութեան թուոյ աշակերտաց ուսանողաց ի դպրանոցին ի հաշիւ հասարակութեան զհարկաւոր գումար դրամաց վասն պահպանութեան քսան թողակաւոր աշակերտաց, Վաթուղիկոսը հաճութեամբ ընդունեց հասարակութեան այդ խնդիրը և խոստացաւ դըպրանոցի կանոնադրութիւնը պատրաստել և տէրութեան հաստատութեան ուղարկել: Ահա այստեղից ծագեցաւ նախիջևանում թեմական դպրանոց հաստատելու խնդիրը, որ իրագործուեցաւ միայն 81 թուին:

(Կը շարունակուի):

Ե. Ծ.



ՍԵՆՐԵԼՈՒՐՔ:

Բժշկութիւն եւ մանկավարժութիւն.— Առողջ միտքը առողջ մարմնի մէջ է. ասում է լատինական առածը. ուստի եւ զարմանալի չէ. եթէ մանկավարժական գործի ղեկավարները մեծ կարեւոր ունենան առողջքամանքի, բժիշկների օգնութեամբ իրենց գործն աղողութեամբ առաջ տանելու համար: Դեռ շատ ժամանակ չէ, որ մանկավարժութիւնը ուզում էին ծանաչել բոլորովին առանձին առարկայ, իսկ բժշկականութիւնն առանձին: Սակայն այդ երկու գիտութիւնների միջեւ եղած սերտ կապը հաստատուելուց յետոյ առողջքամանքն ու բժիշկներն եւս սկսել են նետաքրքրուել մանկավարժական գործով եւ իւրովսան նպաստել լուսատրութեան գործին համար:

Եւրոպական գրականութիւնն այդ կողմից կարող է մատնացոյց անել նշանաւոր գիտնականների ներքին վրայ, բայց ուռաց գրականութիւնը համեմատաբար ղեռ շատ աղքատ է. մեր գրականութեան մասին արեւորդ իսկ է յիշելը:

Սակայն չէ կարելի ասել, թէ ոռաց առողջքամանքի ու բժիշկների մէջ չկան մանկավարժական գործով հետաքրքրուողներ: Դրան ապացոյց է Մոսկուայի բժշկական ժողովի մէ որոշումը, որով 1894 թուի նոյեմբերից մի կարգ թուով 12, դասախօսութիւններ են տեղի ունենալու յատկապէս աշակերտական հասակ ունեցող մանուկների անդամազնական, քննաօտական, ակտաքանական եւ առողջապահական կողմերն ուսումնասիրելու նպատակով: Դասախօսութիւնները կարդալու են մի քանի արդիւնաստներ, պրեկատ-դոցենտներ եւ բժիշկներ: Դնչպէս արուում է դասախօսութիւնները առանձին ժողովածու են կազմելու քացատրիչ նկարներով լուսաբանուած:

Առողջակաւն ուսումնարան.— Ծատ երեխաներ զրկուում են նոյն իսկ միջնակարգ ուսումից իրենց վատառողջութեան պատճառով: Որպէս զի այդպիսի երեխաներին միջոց տրուի ուսումը շարունակելու, 1872 թուին խնդիր էր բարձրացել հարաւային յօրինում յատուկ այդ նպատակով տղայոց զինագիծն հիմնելու մասին: Թէ եւ

1 Կոնդակ Դէրոգ Դ-ի տունաւ յանուն հասարակութեան նորոյն նախիջևանի 113 սեպտ. 1873 ամի:

իւր ժամանակին այդ առաջարկը համակրութեամբ ընդունեց շատ քաղաքների ու մամուլի կողմից, սակայն խնդիրը մնաց առ կախ: Այժմ խնդիրը նորից է յարուցուած. ըսին այն է, որ մի պարոն Ա. Գ. Կուզնեցով ազգանունով, 25 հազար ռուբլի է նուիրել Նալբայում տղայոց զինագիծն հիմնելու նպատակով: Լրագիրներն առաջարկում են, որ այդ փողը յատկացուի վերն յիշուած նպատակին, որին կարելի է միացնել նաև 1872 թուին Նալբայում քաղաքային խորհրդի նոյն այդ նպատակին յատկացրած 30,000 ռուբլին, իսկ գաւառական զեմստովլի 10,000 ռուբլին:

Մանկավարժական թանգարան.— Առաջիկայ 1895 թուից թոյլ է տրուած Օրենսդրացի ուս. շրջանի, Թուրքեստանի եւ Սիբիրի ժողովրդական դպրոցների վարչութիւններին կից հաստատել մանկավարժական թանգարաններ, այդպիսի թանգարան գոյութիւն ունի Պետերբուրգում:

Ուղիւմակաւն խաղեր.— Պարիզի Մորըննում տոյն թուի յունիսի 16-ին ծերակոյտի անդամ զը—Կուրսէի նախագահութեամբ միջազգային կոնգրէս կայացաւ հին ուլիմակաւն խաղերի նմանութեամբ ըմբշամարտական խաղեր հաստատելու նպատակով: Ժողովին ներկայ էին բոլոր պետութիւններից ներկայացուցիչներ, բացի Գերմանիայից: Խաղերը պէտք է որոշ ժամանակներում նշանակուին. առաջին խաղը 1896 թուին կլինի Լոնդոնում, յաջորդը 1900 թուին Պարիզում, համաշխարհային ցուցահանդէսի միջոցին եւ այնուհետեւ կը շարունակուին ըստ կարգին:

Ուսումնարանակաւն պիտոյցներից ուցահանդէս.— Մտադրութիւն կայ 1896 թուին Բերլինում արդիւնագործական ցուցահանդէս կազմելու: Այդ տեղ մի առանձին բաժին կլինի նաև այն բոլոր առարկաների համար, որոնց կապ ունին ուսուցման գործի հետ: Այդ բաժինը բաղկացած կը լինի երկի մասից. Ա. ուսումնարանների շինուածքը եւ ուսումնարանական առողջապահութիւն. Բ. նկարչութիւն եւ ծեռագործ, եւ Գ. ամենայն տեսակ դասական պիտոյցներ, Փիգիբական եւ քիմիական գործիքներ, դասարանների ներքին կազմութիւն, քաւտէզներ, գլոբուսներ, նկարներ, կաղապարներ, քնական գիտութեանց ժողովածուներ, զոքեր, տետրակներ եւլն. եւ այլն:



ՎԻՃԿԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ:

ԵՐԿՐԱԳՐԻ ԵԶԳԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ:

Մերկագնդի քնակիւնների թիւը հաշուում են մօտաւորապէս 4,562 <sup>1</sup>/<sub>2</sub> միլիօն. այս թուից Եւրոպայում 566 միլիօն, Ասիայում 860 միլիօն, Աֆրիկայում 206 միլիօն, Ամերիկայում 125 միլիօն, Աւստրալիայում 3 միլիօն. ընդամենը 4,562 <sup>1</sup>/<sub>2</sub> միլիօն:

ԵՌՐՈՊԱՅԻ ԱԶԳԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՑԵՂՆԵՐԸ:

Սլաւոններ 402 միլիօն, որոնցից 70 միլիօն ռուսներ եւ ռուսներ են, 15,960,000 լեհեր, 8 միլիօն Բոհեմացիք, Մոլդաւացիք եւ Սլովակներ, 6 <sup>1</sup>/<sub>2</sub> միլիօն Սերբեր եւ Խորվաթներ, 3 միլ. Բուլղարներ, 4,460,900 Սլովենացիներ եւ 355,900 հայեր:

Ռոմանական ազգեր 402 միլ. սրանցից 40 <sup>1</sup>/<sub>2</sub> միլիօն, Փրանսիացիք եւ Դաւոններ են, 51 միլիօն Իտալացիներ 2 <sup>1</sup>/<sub>2</sub> միլ. Իսպանացիք եւ Պորտուգալացիք են, 9 միլ. Ռումիներ եւ 49,000 Բնասորմականներ են: Գերմանական ազ-



գեր 109 միլ. որոնցից 65 միլիոն Գերմանացիք եւ Հոլանդացիք, 55 միլ. Բրիտանացիք եւ 9 միլ. Սկանդինաւներ:

Եւրոպայում հաշուում են 7,130,000 հրէաներ, որոնցից 4 միլ. Ռուսաստանում, 1 1/2 միլիոն Աւստրո-Հունգարիայում, 50,000 Փրանսիայում, 40,000 Իտալիայում, 150,000 Բալկանեան Թերակղզում եւ այլ պետութիւնների մէջ 15,000:

ԵՒՐՈՊԱՅԻ ԱԶԳՆԻՐԸ ԸՍՏ ԴԱՆԱՆՈՒԹԵԱՆՑ:

Հոռովական եկեղեցուն պատկանում են մօտաւորապէս 136 միլ. (37,5 %) Եւրոպայի ընդհանուր ազգաբնակչութեան. Արեւելեան եկեղեցուն 81 1/2 միլ. որոնցից յունադաւան 80,567,000 (24,56 %), նոյն դաւանութեան պատկանող աղանդաւորներ 4,019,000 (0,51 %). Հայաստանեայց եկեղեցուն 124,000 (0,04 %). Բողոքականներ 79 միլ. (24 %), սոցանից աւետարանական դաւանութեան (Լութերականներ, Բեֆորմատներ եւ Ունիտարներ) պատկանում են 54 միլ. (16,4 %), Անգլիկան 49 միլ. (6,7 %), մէթոդիստներ 5,310,000 (1 %), Այլ բողոքականներ մօտաւորապէս 5. միլ. Ունիտարներ (սոցենեաններ) 120,000: Հրէաներ 6 միլ. (1,8 %). Մահմադականներ 6,445,000. հեթանոսներ մօտաւորապէս 450,000-ուրեմն ոչ քրիստոնեայ դաւանութիւնները Եւրոպայում 5.8 % են:

Հ. Շ.



## ԱԶԳԱՅԻՆ

ՎԵՆԷՍԷԼՈՒ ԷԼՅԵՐԵՊԵՏԻ ՀՆՈՐԷԼՊԱՐԳԵԻ

ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԵ ԻՐ ԼՕՏԻՆ.

Շատ է խօսուած եւ գրուած Հայաստանեայց եկեղեցու առաքելական աւանդութիւնների եւ հնաւանդ սկզբունքների մասին, սակայն քիչ անգամ է թուած այդ աւանդութիւններն ու սկզբունքները: Այսօր ամեն մի բանագէտ ինչպէս եւ ամեն մի համբալ հոգեւորմէ մեր Ս. եկեղեցու քրիստոնէական շնորհաւատ յատկութիւնները առանց որոշ եւ թանձրացեալ օրինակներով իւր ապաճներն ապացուցանելու Այս տեղից էլ ծագում են այն անհամար թիւր կարծիքներն, որ մօքերի կիսակիրթ առաջնորդները բարդում են մեր Ս. եկեղեցու վերայ: Իայց հաւատի հաստատուն վիժի վերայ շինուած եկեղեցին անսայթաք յառաջագիմում է եւ կեանքի ամենայն մի կարեւոր դիպուածում ցոյց է տալիս իւր աստուածապարգեւոյժը եւ հնաւանդ սկզբունքների հաւատարմութիւնը:

Աստուածային Վարդապետը իւր աշակերտներին պատուէր տուաւ իւրեանց կեանքը

ժը հօտի վերայ դնելու: Այս պատուէրին հպատակելով ս. առաքելներն ու նրանց յաջորդ եկեղեցու սուրբ հայրերը քարոզեցին կենդանի խօսքով եւ շատ անգամ էլ իրենց կեանքը զոհեցին:

Այս առաքելական սովորութիւնը պահեց Հայաստանեայց եկեղեցին իւր գոյութեան ամբողջ ընթացքում: Հայոց Հայրապետները երբէք չը նմանեցան այն եկեղեցական հովիւներին, որոնք անշարժ իրենց գահի վերայ բաղմում են եւ երկրպագութեան են սպասում: Սրբազան Առաքել Հայրապետից սկսած՝ մինչեւ մեր օրերը Հայոց Հայրապետներն ամենքն էլ չը գոհացան միայն հեռուից ուսուցանելով, թղթերով խօսելով եւ իրենց գահայքի մերձաւորներին միտիթարելով: Նրանք զբեթէ ամենքն էլ շրջեցին ժողովրդի մէջ, ապրեցին իրենց հօտի հետ եւ մեռան նրա հետ եւ նրա մէջ:

Յիշենք արդեօք Մեծն Ներսիսին, որբերի, աղքատների, հիւանդների, նախարարների ու թագաւորների հօրը, տանք արդեօք Ս. Սահակի անունը, որ իւր ամբողջ կեանքում դադար չունեցաւ, որ պարտից բաժնից յունաց բաժինն էր թափառում: Տիգրանից մինչեւ Կ. Պօլիս էր հասցնում իւր ձայնը: Ո՞վ է մոռացել ս. Յովսէփի կաթողիկոսին, որ երգուեց իւր հօտի հետ միասին մեռնելու եւ մեռաւ իսկ գերութեան մէջ:

Կ'երկարէր այս առաքելիւնների շարքը, եթէ մի առ մի թուէինք, ուստի թող բաւական լինին միայն մի քանի օրինակներ, թող ամեն ոք ինքն յիշէ Վահանի զինակից Մանգալունի կաթողիկոսին, միւս Յովհանն կաթողիկոսին, Ջորափորեցի Սահակ կաթողիկոսին եւլն, եւլն:

Վերջին թշուառութեան դարերումն անգամ հայոց Հայրապետները չեն զլացել իրենց հօտին այցելելու եւ անձամբ միտիթարելու: Այն դիպուածներում, երբ հայոց Հայրապետները չեն նմանել «որսորդներից հալածուած այծեամի», ինչպէս ասում է անըման Շնորհալին, նրանք միշտ իւրեանց